ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/05

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.01.2022թ. թիվ 26/26-1/21684-2021 գրությամբ «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 27.12.2021թ. թիվ 3/27/89742-21 գրության հիման վրա, 04.01.2022թ. թիվ 26/26-1/21684-2021 գրությամբ նախաձեռնել է «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ԷՄԳԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԷՄԳԱ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ԷՄԳԱ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/05 ընթացակարգի շրջանակներում 10.01.2022թ. ժամը 09:50-ին և 14.01.2022թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.12.2021թ. թիվ 3/27/89742-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանությունը 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Ձեզ է ուղարկում ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2021-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «ԷՄԳԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը, արձանագրությունները և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կնքված պայմանագիրը, 17.11.2021թ. ֆինանսական միջոցների հաստատման համաձայնագիրը և պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը, տեղեկանք հիմնավորումներ՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/05 ընթացակարգի շրջանակներում 10.01.2022թ. ժամը 09:50-ին և 14.01.2022թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/05 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/05 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության և «ԷՄԳԱ» ՍՊԸ-ի միջև 30.09.2021թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2021-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի հավելված N 2-ով՝ մատակարարման ժամանակացույցով, սահմանվել է ապրանքի մատակարարման հետևյալ ժամկետը՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրվա ընթացքում 4000, 80 օրվա ընթացքում 4000, բայց ոչ ուշ քան 20.12.2021թ.:

3. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 19.11.2021թ. կնքվել է Համաձայնագիր N 1-ը, որի 1.2 կետի համաձայն՝ ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

4. Պատվիրատուն «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին ուղղված 24.12.2021թ. թիվ 27/1890 գրությամբ հայտնել է հետևյալը.

«27.09.2021 թվականին ՀՀ ոստիկանության կարիքների համար թևքանշանների ձեռքբերման նպատակով ՀՀ ոստիկանության և «ԷՄԳԱ» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2021-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7 ծածկագրով պայմանագիր: Վերոնշյալ ընկերությունը պարտավորվել է ապրանքը մատակարարել սույն թվականի մինչև դեկտեմբերի 20-ը:

«ԷՄԳԱ» ՍՊԸ-ի կողմից ապրանքի մատակարարումը չի իրականացվել պայմանագրով սահմանված ժամկետում, ուստի պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է զեկուցագիր, տեղեկանք համապատասխան չափաբաժնի վերաբերյալ:

Պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի հավելված 1-ով սահմանված ապրանքը կազմակերպության կողմից չի մատակարարվել և խախտվել են պայմանագրի էական պայմանները: Հետևաբար ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2021-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7 ծածկագրով պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունից կգանձվի որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները...»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 24.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.01.2022թ. թիվ 26/26-1/21684-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 27.12.2021թ. թիվ 3/27/89742-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ ոստիկանության և «ԷՄԳԱ» ՍՊԸ-ի միջև 30.09.2021թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2021-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված N 2-ով՝ մատակարարման ժամանակացույցով, սահմանվել է ***ապրանքի մատակարարման հետևյալ ժամկետը***՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրվա ընթացքում 4000, 80 օրվա ընթացքում 4000, բայց ***ոչ ուշ քան 20.12.2021թ.:***

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 19.11.2021թ. կնքվել է Համաձայնագիր N 1-ը, որի 1.2 կետի համաձայն՝ ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

Պատվիրատուն «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին ուղղված 24.12.2021թ. թիվ 27/1890 գրությամբ հայտնել է հետևյալը.

«27.09.2021 թվականին ՀՀ ոստիկանության կարիքների համար թևքանշանների ձեռքբերման նպատակով ՀՀ ոստիկանության և «ԷՄԳԱ» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2021-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7 ծածկագրով պայմանագիր: Վերոնշյալ ընկերությունը պարտավորվել է ապրանքը մատակարարել սույն թվականի մինչև դեկտեմբերի 20-ը:

«ԷՄԳԱ» ՍՊԸ-ի կողմից ապրանքի մատակարարումը չի իրականացվել պայմանագրով սահմանված ժամկետում, ուստի պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է զեկուցագիր, տեղեկանք համապատասխան չափաբաժնի վերաբերյալ:

Պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի հավելված 1-ով սահմանված ապրանքը կազմակերպության կողմից չի մատակարարվել և խախտվել են պայմանագրի էական պայմանները: Հետևաբար ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2021-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7 ծածկագրով պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունից կգանձվի որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները...»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 24.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.***

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

Այսպիսով՝ ուսումնասիրելով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետի վերաբերյալ դրույթը, գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Պայմանագրի 2.1.7 կետով նախատեսված Պայմանագիրը միակողմանի լուծելու համար հիմք հանդիսացող «ԷՄԳԱ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի էականորեն խախտման փաստը, քանի որ համաձայն Պայմանագրի՝ ապրանքի մատակարարման առավելագույն ժամկետն ըստ էության նախատեսված է եղել 20.12.2021թ., իսկ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը սահմանում է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի, ***մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն 24.12.2021թ. լուծել է 30.09.2021թ. կնքված թիվ***

«ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2021-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7» ծածկագրով պայմանագիրը, Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետով սահմանված ժամկետի, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի, լրացած չլինելու, այսինքն՝ Պայմանագրի 2.1.7 կետով նախատեսված էական խախտման փաստը վրա հասած չլինելու պայմաններում:

Նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «ԷՄԳԱ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտման փաստը, ուստի առկա չեն «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 04.01.2022թ. թիվ 26/26-1/21684-2021 գրությամբ «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**